Տ. ՈՍԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՓԱԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 փետրվարի, 2016 թ.)

Օրհնեալ, Որդիդ Սուրբ, Ասպված ճշմարիտ. ամէն:

«Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ Հայր եթէ ոչ ինեւ»
(Հովհ. ԺԴ. 6-7):

Այսօր Ընդհանրական Եկեղեցին տոնում է Բուն Բարեկենդանը: Պարտք եմ համարում հակիրճ բացատրել, թե ինչ է հասկացվում Բուն Բարեկենդան ասելով: Դա ասելով՝ հասկանում ենք բարեկենդաններից ամենակարեւորը, քանի որ Հայ Եկեղեցին, նախքան կարեւոր եկեղեցական տոները, ունի տարբեր բարեկենդանի օրեր: Բուն Բարեկենդանը եղել է դարավոր սովորություն Ընդհանարական Եկեղեցում: Բարեբախտաբար, այն սխալ չի ընդունվել մեր ժողովրդի կողմից, մինչդեռ հեթանոսական սովորությանց համաձայն՝ Եվրոպայում սխալ է ընկալվել: Այդ օրը մարդիկ կերել են, խմել, հարբել եւ դիմակահանդեսներ կազմակերպել: Շատ տեղերում այն կոչվում է դիմակահանդես՝ զեխության օր: Բարեբախտաբար, հայերս այդպես չենք ըմբռնում, որովհետեւ զեխությունը, հարբեցողությունը մեղք է: Բուն Բարեկենդան չի նշանակում, որ քառասնօրյա պահքի նախորդ օրը մենք պետք է ապրենք ամեն տեսակի զեխություն, իսկ հետո սկսենք քառասնօրյա պահքը, որը Եկեղեցին վերցրել է քառասնօրյա ծոմից, երբ Քրիստոս մկրտությունից հետո գնաց անապատ եւ ճգնեց քառասուն օր: Հիշենք՝ ինչպես այդ ընթացքում սատանան երեք անգամ փորձեց Քրիստոսին: Առաջին հերթին, քանի որ Քրիստոս ծոմ էր պահում, սատանան ասաց Քրիստոսին. «Եթե Աստծու Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն»: Հիսուս պատասխանեց. «Մարդ ոչ միայն հացով է ապրում, այլ նաեւ՝ Աստծո խոսքերով»: Ապա Քրիստոսին տարավ մի

բարձր տեղ եւ ասաց. «Եթե Աստծու Որդին ես, Քեզ այստեղից ցա՛ծ գցիր, որովհետեւ գրված է՝ Իր հրեշտակներին պատվիրված է Քո մասին, եւ ձեռքերի վրա պիտի վերցնեն Քեզ, որպեսզի երբեք Քո ոտքը քարին չխփես»: Քրիստոս ասաց. «Գրված է՝Քո Տեր Աստծուն պիտի չփորձես»: Սատանան նորից նրան տարավ մի բարձր լեռան վրա եւ ցույց տալով աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը՝ ասաց. «Այս բոլոր Քեզ կտամ, եթե ինձ երկրպագես»: Հիսուս ասաց. «Ետեւս գնա, սատանա՛» (հմմտ. Մատթ. Դ. 1-10):

Քրիստոսի այս երեք փորձությունները սատանայի կողմից այսօր կարող ենք համեմատել մեզ հետ, մեր ցանկությունների հետ. ո՞վ չի ցանկանում հարստանալ եւ աշխարհի ողջ հարստությունն ունենալ, բայց Քրիստոս այս երեքին էլ պատասխանեց, որովհետեւ Ինքը Աստվածորդի էր:

Վերադառնալով բնաբանին՝ ուզում եմ Ճանապարհն անվանել ապաշխարություն, Ճշմարտությունը կոչել ճշմարիտ խոստովանություն, Կյանքի անունը դնել հաղորդություն: Ահավասիկ, ապաշխարության քառասուն օրերը, որ մեր Եկեղեցին հորդորում է ամեն քրիստոնյայի ապաշխարել: Չփորձենք ձեւականորեն Զատկի նախորդ օրը խոստովանվել եւ հաղորդություն ստանալ: Ճիշտ է՝ առանց հաղորդության մարդը կյանք չունի՝ «Հող է ու հող պիտի դառնա» (հմմտ. Ծննդ. Գ. 19), ու թեեւ հաղորդությամբ մարդը կարող է հավիտենականություն ժառանգել, սակայն հաղորդությունն իր պայմաններն ունի՝ առաջին հերթին ապաշխարության Ճանապարհով անցնելն է, Ճանապարհ, որի վրա գրված է ապաշխարություն: Քառասուն օրեր հայ քրիստոնյան հրավիրված է ապաշխարության. ի՞նչ ենք հասկանում ապաշխարություն ասելով: Առաջին հերթին անհրաժեշտ է մեղք չգործել, ոչ թե ձեւականորեն հրաժարվել կենդանական ծագման սնունդից: Անշուշտ, գովելի է, որ մենք այդ ձեւը պահենք՝ կենդանական սնունդ չօգտագործենք: Հունաստանում Բուն Բարեկենդանը հաճախ անվանում են՝ «Մսին գնաս բարով մինչեւ Զատիկ»: Մենք այդ բոլորը հասկանում ենք հոգեւոր կերպով, այնտեղ, ուր ամփոփված է մեր հավատքն իր էությամբ: 325 թ. Նիկիո տիեզերական ժողովին Եկեղեցու Հայրերը ընդունեցին «Հավատամք»-ը, որով մենք հաստատում ենք մեր հավատը Սուրբ Երրորդության նկատմամբ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի: «Հավատամք»-ի մեջ ասում ենք՝ «Հաւատամք եւ ի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի», ապա ավելացնում ենք՝ «Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն» (Պատարագամատոյց): Մկրտությամբ երախան

ազատվում է աղամական մեղքից, որի պատճառով Ադամն ու Եվան արտաքսվեցին դրախտից։

Այսպիսով, մենք, ամփոփված, խտացված մեր հավատքի էության մեջ, ասում ենք՝ հավատում ենք մի մկրտության եւ ապաշխարության։ Սարկավագը ասում է պատարագի ժամանակ՝ «Հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ։ Մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ եւ խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ» (Պատարագամատոյց)։

Ահավասիկ, այս բոլոր մեղքերը ապաշխարության միջոցով պետք է դուրս գան մեր հոգուց եւ մարմնից։ Ո՞վ անխիղճ չէ. բոլորս էլ ինչ-որ տեղ ցույց ենք տալիս անխղճություն, գայթակղություն, նենգություն, խորամանկություն, խաբեություն, երկմտություն եւ թերահավատություն։ Ըստ Հիսուսի՝ եթե նույնիսկ մենք մտածում ենք ստախոսության, խաբեության, կաշառք վերցնելու, հայհոյելու մասին, արդեն իսկ մեղքի մեջ ենք։ Եթե այս բոլորը մեր մեջ են, եւ չենք ապաշխարել, սարկավագը շատ հստակ կերպով պատարագի ժամանակ հրամայում է. «Որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէ՛ք եւ աղօթեցէ՛ք» (Պատարագամատոյց)։ Եթե այս մեղքերի մեջ ենք եւ չենք ապաշխարել, մաքրվել, ապա Աստծո տան մեջ մնալու իրավունք չունենք, պետք է դուրս գանք եւ աղոթենք, մինչեւ կարողանանք անցնել ապաշխարության ճանապարհը։

Ահա սիրելինե՛ր, հակիրճ ձեզ ներկայացրի այն ամենը, ինչ ուզում էի պատմել ապաշխարության մասին՝ «Ես եմ Ճանապարհ եւ Ճշմարտութիւն»։ Ճանապարհը ապաշխարությունն է, ինչպես ասացի, իսկ Ճշմարտությունը՝ անկեղծ խոստովանությունը։ Մենք գիտեք, որ այն մեղքերը, որոնք խոստովանում ենք, որոշ ժամանակ անց կրկին պիտի գործենք։ Դա արդեն խոստովանություն չէ. եթե խոստովանում ես, պիտի հավատաս, որ այդ մեղքն այլեւս չպիտի գործես։ Իմաստուն առաքյալն ասում է. «Ո՞վ է մարդ, որ կեցցէ եւ ոչ մեղիցէ» (հմմտ. Հռոմ. Գ. 10, Սաղմ. Ծ. 6)։

Այո՛, մարդկային է մեղքը, բայց խոստովանությունը պետք է լինի իրական, խոստովանության ժամանակ նախքան հաղորդվելը մենք պետք է հավատանք, որ այդ մեղքը այլեւս մենք չպիտի գործենք։ Շատ մարդիկ այսպես են մտածում. «Մեղքը կգործեմ, հետո կխոստովանվեմ, հաղորդություն կստանամ, հետո կրկին այդ մեղքը կգործեմ, հետո նորից կխոստովանվեմ»։ Ո՛չ, այդ խոստովանանքը ընդունելի չէ, եթե այդպես ես խոստովանում, ուրեմն չես ապրել ապաշխարության խորհուրդը, չես անցել

այդ ճանապարհով, որը մարդուն մաքրում է, մինչդեռ, նախքան Քրիստոս, Եսայի մարգարեն անգամ խոսել է ապաշխարության ճանապարհի մաքրող ուժի մասին:

Առաքյալն ասում է՝ «Սաստեա եւ յանդիմանեա» (Բ. Տիմ. Դ. 2): Երեւի մարդկային բնավորության հարց է. կյանքում ոչ ստել եմ, ոչ էլ հանդիմանել, բայց աղաչում եմ, խնդրում եմ, անցե՛ք ապաշխարության ճանապարհով: Այս քառասուն օրերի ընթացքում թո՛ղ ձեր խոստովանությունը լինի անկեղծ, եւ միայն այդ ժամանակ մոտեցեք հաղորդությանը, որը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ Կյանք:

Ապաշխարության խորհուրդը ապրե՛ք եւ ճշմարտությամբ խոստովանե՛ք, ընդունե՛ք կյանքը, որը Քրիստոսի Մարմինն ու Արյունն է, որպեսզի կարողանաք ճանաչել երկնքի արքայությունը. ամեն: